ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 14/2

քսաներկուսը դեկտեմբերի 2011 թվականի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ 2003Թ.ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 30-րդ կետի 1-ին ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգը (նոր խմբագրությամբ)՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել 2003թ. նոյեմբերի 20-ին Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2011 թ. դեկտեմբերի 22-ի նիստում

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ
Ա. Հ. Սիմոնյան

«22» դեկտեմբերի 2011թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) գիտական խորհրդի (այսուհետ՝ գիտական խորհուրդ) կազմի ձևավորման և գործունեության կարգը, նիստերի նախապատրաստման և անցկացման, որոշումների ընդունման ընթացակարգը:

2. Սույն կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են գիտական խորհրդի կողմից:

II. ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Գիտական խորհուրդը ԵՊՀ կառավարման մարմին է, որը լուծում է ԵՊՀ ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հիմնահարցերը:

Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը հինգ տարի է:

4. Գիտական խորհուրդը՝

1) հաստատում է իր կանոնակարգը,

2) ռեկտորի ներկայացմամբ՝ որոշում է ստեղծել, վերակազմակերպել, լուծարել ֆակուլտետներ, գիտահետազոտական ինստիտուտներ, կենտրոններ, քոլեջներ, ավագ դպրոցներ, ինչպես նաև ամբիոններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ,

3) հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները (այդ թվում՝ օրինակելի), ԵՊՀ և կառուցվածքային ստորաբաժանումների հիմնական գործունեությունը և ուսումնական գործընթացը կանոնակարգող ներքին իրավական այլ ակտերը,

4) քննարկում և հաստատում է կրթական ծրագրերը, ըստ մասնագիտությունների սահմանում է վճարաչափերը,

5) քննարկում է գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում գիտական հաղորդումներ ԵՊՀ-ում կատարվող կարևորագույն գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին,

6) ընդունում է պատվավոր կոչումներ շնորհելու, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ տալու, ԵՊՀ շքանշանով և մեդալով պարգևատրելու, հանրապետական ու

միջազգային պարգևների և կոչումների համար թեկնածություններ ներկայացնելու մասին որոշումներ,

7) հաստատում է ֆակուլտետի դեկանի, ամբիոնի վարիչի և պրոֆեսորադասախոսական համակազմի ընտրությունների ընթացակարգերը,

8) շնորհում է գիտական կոչումներ և հաստատում է գիտամանկավարժական համակազմի պաշտոնների տեղակալման մրցույթների արդյունքները,

9) ԵՊՀ գործունեության բնագավառներին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ լիազոր մարմին է ներկայացնում առաջարկություններ ԵՊՀ գործունեության հիմնական ուղղությունների, այդ թվում՝ նոր մասնագիտություններով կրթական ծրագրեր իրականացնելու վերաբերյալ,

10) առաջարկություններ է ներկայացնում ռեկտորին ԵՊՀ եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագծի վերաբերյալ,

11) քննարկում է հանրապետության հասարակական, քաղաքական, կրթական, գիտական և մշակութային կյանքին ու կարևորագույն իրադարձություններին վերաբերող խնդիրներ, ըստ անհրաժեշտության ընդունում է հայտարարություններ,

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից և ԵՊՀ կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

III. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

5. Գիտական խորհրդի անդամների ընդհանուր թիվը 88 է, որի առնվազն 50 տոկոսն ընտրովի անդամներն են: Գիտական խորհրդի կազմի մեջ մտնում են ի պաշտոնե ռեկտորը, պրոռեկտորները, գիտական քարտուղարը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահը, ԵՊՀ գլխավոր հաշվապահը, արհեստակցական կազմակերպության նախագահը, իրավաբանական բաժնի ղեկավարը, ֆակուլտետների, մասնաճյուղերի և այլ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև ընտրովի անդամներ՝ սույն կանոնակարգին համապատասխան:

6. Գիտական խորհրդի անդամների թվի քսանհինգ տոկոսը սովորողներն են, որոնց առաջադրումն իրականացնում է համապատասխան մակարդակի ուսանողական խորհուրդը, իսկ ընտրությունն իրականացնում է ԵՊՀ ուսանողական խորհուրդը՝ իր կանոնադրությամբ սահմանված կարգով:

7. Ընտրովի անդամների համամասնությունը և ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներին հատկացվող տեղերի չափաբաժինները որոշում է գիտական խորհուրդը՝ ռեկտորի առաջարկությամբ, իսկ ստորաբաժանումներում անդամների ընտրությունը կատարվում է ստորաբաժանման կանոնադրությամբ սահմանված կարգով:

8. Գիտական խորհրդի կազմը հաստատվում է ռեկտորի հրամանով՝ հինգ տարի ժամկետով:

IV. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ՆԻՍՏԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Գիտական խորհուրդն իր լիազորություններն իրականացնում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով:

10. Գիտական խորհրդի հերթական նիստերը հրավիրվում են տարեկան առնվազն ութ անգամ:

11. Գիտական խորհրդի նիստերը նախապատրաստում են ռեկտորը (գիտական խորհրդի նախագահ) և ԵՊՀ գիտական քարտուղարը (գիտական խորհրդի քարտուղար):

12. Գիտական խորհրդի քարտուղարը, գիտական խորհրդի նիստ (հերթական կամ արտահերթ) հրավիրելու և նիստի օրակարգի մասին գրավոր ծանուցում է գիտական խորհրդի անդամներին հերթական նիստի անցկացման օրվանից առնվազն հինգ օր առաջ, արտահերթ նիստի անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ: Գիտական խորհրդի տվյալ նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ փաստաթղթային փաթեթը (որոշումների նախագծեր, տեղեկանք-հիմնավորումներ և այլն) գիտական խորհրդի անդամներին ուղարկվում է նիստի անցկացման օրվանից առնվազն երեք աշխատանքային օր առաջ:

13. Գիտական խորհրդի արտահերթ նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ գիտական խորհրդի նախագահի կողմից կամ գիտական խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի գրավոր պահանջով՝ նրանց կողմից առաջարկված օրակարգով և ժամկետներում:

14. Գիտական խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է գիտական խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը:

15. Գիտական խորհրդի անդամների ներկայությունը գրանցում է գիտական քարտուղարը՝ նիստն սկսվելուց առաջ: Քվորումը չապահովելու դեպքում գիտական խորհրդի նախագահի որոշմամբ գրանցման գործընթացը կարող է երկարաձգվել մինչև 30 րոպե, իսկ դրանից հետո քվորում չապահովելու պարագայում նիստը հետաձգվում է:

16. Գիտական խորհրդի քվորումի բացակայության պատճառով հետաձգված նիստը՝ նույն օրակարգով, գումարվում է սույն կանոնակարգով սահմանված ընդհանուր հիմունքներով:

17. Ռեկտորը, բացելով գիտական խորհրդի նիստը, տեղեկատվություն է տրամադրում քվորումի առկայության վերաբերյալ և քվեարկության է դնում նիստի օրակարգը:

18. Գիտական խորհրդի անդամները կարող են առաջարկել նիստի օրակարգում ընդգրկել այլ հարցեր, ինչը սահմանված կարգով դրվում է քվեարկության:

19. Նիստի օրակարգում ներառված հարցերի քննարկման կարգը, հիմնական և հարակից զեկույցների, ինչպես նաև ելույթների տևողությունը որոշում է գիտական խորհուրդը՝ գիտական խորհրդի նախագահի առաջարկությամբ:

V. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

20. Գիտական խորհրդի որոշումներն ընդունվում են գիտական խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, եթե գիտական խորհուրդն այդ որոշման ընդունման համար քվեարկության այլ կարգ չի սահմանել:

21. Պաշտոնների զբաղեցման, գիտամանկավարժական պաշտոնների տեղակալման և գիտական կոչումների ներկայացման, ամբիոնի վարիչի ընտրության ու այլ մրցույթները կատարվում են փակ, գաղտնի քվեարկությամբ:

22. Փակ, գաղտնի քվեարկության համար նախատեսված քվեաթերթիկները պատրաստում է գիտական քարտուղարը՝ մինչև գիտական խորհրդի նիստը:

23. Քվեաթերթիկում նշվում է գիտական խորհրդի նիստի անցկացման ամսաթիվը, հերթական համարը, քվեարկության դրվող հարցի բովանդակությունը, քվեարկության հնարավոր տարբերակները («կողմ», «դեմ»):

24. Քվեաթերթիկի հակառակ երեսին ստորագրում է գիտական քարտուղարը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ գիտական խորհրդի որոշմամբ նաև հաշվիչ հանձնաժողովի նախագահը և անդամները:

25. Քվեարկությունից առաջ հաշվիչ հանձնաժողովի նախագահը, ըստ անհրաժեշտության, գիտական խորհրդին տեղեկատվություն է տրամադրում քվեարկության անցկացման և քվեաթերթիկի լրացման կարգի վերաբերյալ:

26. Քվեաթերթիկը վավերական է, եթե դրանում քվեարկվել է միայն մեկ տարբերակ:

27. Հաշվիչ հանձնաժողովի անդամներն առանձին սենյակում բացում են քվեատուփը և իրականացնում են քվեարկության արդյունքների հաշվառում:

28. Քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

29. Քվեարկության արդյունքները հաստատվում են գիտական խորհրդի կողմից՝ նույն նիստում:

VI. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

30. Գիտական խորհրդի որոշումները կիրարկվում են ռեկտորի հրամաններով:

31. Ռեկտորն իրավասու է կասեցնելու գիտական խորհրդի այն որոշումները, որոնք չեն բխում նրա լիազորություններից, հակասում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը, ԵՊՀ կանոնադրությանը, սույն կանոնակարգին և ներքին իրավական այլ ակտերին:

32. Գիտական խորհրդի այն որոշումները, որոնք ռեկտորի կողմից կասեցվել են ընդունման ընթացքում ընթացակարգային խախտումներ թույլտրվելու պատճառով, դրվում են վերաքննարկման և վերաքվեարկության գիտական խորհրդի նույն կամ այլ նիստում:

33. Գիտական խորհրդի որոշումների կասեցման մասին ռեկտորի հրամանները պետք է լինեն հիմնավոր և պատճառաբանված:

VII. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

34. Գիտական խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստերի արձանագրությունը երկու օրինակից կազմում է գիտական քարտուղարը գիտական խորհրդի նիստն ավարտվելուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Արձանագրությունը ստորագրում են գիտական խորհրդի նախագահը և գիտական քարտուղարը:

35. Արձանագրության մեջ պետք է նշվեն նիստի անցկացման ամսաթիվը, նախագահը, քարտուղարը, քվեակազմը, նիստի օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերի բովանդակությունը, քվեարկության արդյունքները և գիտական խորհրդի կողմից ընդունված որոշումները:

VIII. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

36. Հաշվիչ հանձնաժողովը ստեղծվում է գիտական խորհրդի որոշմամբ՝ խորհրդի անդամների փոխատեղման (ռոտացիայի) սկզբունքով: Յուրաքանչյուր նիստում հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատում է գիտական խորհուրդը՝ գիտական խորհրդի նախագահի առաջարկությամբ՝ ըստ գիտական խորհրդի ցուցակային կազմի:

37. Հաշվիչ հանձնաժողովը կազմակերպում և անցկացնում է քվեարկություններ, պարզաբանում է քվեարկության ընթացքում առաջացող հարցերը, քվեարկության կարգը, ապահովում է քվեարկության կարգի պահպանումը, կազմում է արձանագրություն քվեարկության արդյունքների վերաբերյալ և այն ներկայացնում է գիտական խորհրդի հաստատմանը:

IX. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

38. Գիտական խորհրդի որոշմամբ, ըստ անհրաժեշտության կարող են ստեղծվել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ (մրցութային, որակի ապահովման, կանոնակարգերի մշակման և այլն), որոնց կարգավիճակը, կառուցվածքը, իրավասությունը և աշխատակարգը սահմանվում են գիտական խորհրդի կողմից:

39. Հանձնաժողովների խնդիրն է իրենց կանոնակարգման ոլորտի հարցերի ուսումնասիրումը, նախապատրաստումը և դրանց վերաբերյալ գիտական խորհրդին առաջարկության ներկայացումը:

40. Հանձնաժողովների կառուցվածքը և կազմը որոշում է գիտական խորհուրդը:

41. Հանձնաժողովներն իրենց ոլորտին վերաբերող հարցերը քննարկում են գիտական խորհրդի և/կամ ռեկտորի հանձնարարությամբ:

42. Հանձնաժողովներն իրավասու են ԵՊՀ կառավարման մարմիններից, կառուցվածքային ստորաբաժանումներից և պաշտոնատար անձանցից պահանջելու և ստանալու անհրաժեշտ փաստաթղթեր ու նյութեր:

43. Հանձնաժողովների նիստերն իրավազոր են հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդի ներկայության դեպքում:

44. Համահամալսարանական հանձնաժողովների փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

45. Հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն հանձնաժողովում քննարկված հարցերի վերաբերյալ ունենալ հատուկ կարծիք և այն ներկայացնել գիտական խորհրդին: